ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **11. 10. 2023թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Հ. Գույլանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Մ. Հովհաննիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Հ. Գևորգյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար**
Ա. Գրիգորյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Ռ. Թադևոսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Մ. Դատումյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**
Ա. Մարկոսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**

Մարզի ուժային կառույցների ղեկավարներ,

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ,

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ,

Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների ղեկավարներ,

Մարզի բժշկական հաստատությունների տնօրեններ,

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի նախագահությամբ մեկնարկեց օրակարգային հարցերի քննարկումը:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. Մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:
4. Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ:
5. Հանքերի նպատակային նշանակության փոփոխության մասին:
6. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:
7. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
8. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ:
9. Այլ հարցեր:

Լսեցին՝

1. ***Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ*** */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2023 թվականի ինն ամսվա ընթացքում իրականացվել է 96,4 %-ով, որը կազմում է տարեկան պլանային ցուցանիշի մոտ 71%-ը: Բարձր ցուցանիշներ են ապահովել Աշտարակ /101,3%/, Շամիրամ /145,4%/, Ապարան /98,4%/, Ալագյազ /111,6%/, Մեծաձոր /106,9%,/ համայնքները: Որոշակի թերացումներ կան Ծաղկահովիտ /68,5 %/, Արևուտ /79,5%/ և Թալին /83,5%/ համայնքներում: Նշվեց, որ հավաքագրման թերակատարում ունեցող խոշորացված համայնքները նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին աշխատանքները լիարժեք կազմակերպելու դեպքում կունենան 100% ցուցանիշ:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանն առաջարկեց Ծաղկահովիտ և մյուս համայնքների ղեկավարներին մինչև տարեվերջ բարելավել իրենց եկամուտների հավաքագրման գործընթացը անհրաժեշտ պլանավորած ցուցանիշը ապահովելու նպատակով:

2. ***Մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ*** */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը ներկայացրեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի համաձայն 2023 թվականի փետրվար ամսից մեկնարկած մարզի համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների 2003-2022թթ. ժամանակահատվածում ամենամյա չօգտագործված արձակուրդների տրամադրման գործընթացը շարունակվում է: 2023 թվականի փետրվարի 10-ի դրությամբ ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը մարզի համայնքներում կազմել է 18 մլն. 917 հազար ՀՀ դրամ: Համայնքապետարանների կողմից ձեռնարկված համապատասխան աշխատանքների արդյունքում 2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարվել է շուրջ 18մլն. 531 հազար ՀՀ դրամ և մնացել է ընդամենը 386 հազար ՀՀ դրամ:

3. ***Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ*** *//զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2021թ.-ից ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն մեկնարկած համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները շարունակվում են: 2021թ.-ին մարզի համայնքներում առկա գրանցում չունեցող 138 միավոր շենք-շինություններից մարզպետի աշխատակազմի աջակցությամբ և համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում մինչ օրս 126 միավոր շենք-շիններ արդեն իսկ գրանցվել են և ունեն սեփականության իրավունքի վկայականներ: 10.10.2023թ. դրությամբ մարզի համայնքներում մնացել են ընդամենը 12 միավոր դեռևս չգրանցված գույքային միավորներ: Հետևողական աշխատանքները շարունակվում են:

4. Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Տեղեկացվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունից և մարզի համայնքների ղեկավարների կողմից ստացված տվյալների ամփոփման արդյունքում պարզվել է, որ 10.10.2023թ. դրությամբ մարզի համայնքներում առկա են ազդարարման 113 էլեկտրական շչակներ: Մարզի ամբողջ բնակչության ազդարարման ձայնածածկույթի ապահովման համար անհրաժեշտ են ևս 37 շչակներ:

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարար վարչության պետ Դ. Պետրոսյանը առաջարկեց իր աջակցությունը Ապարան համայնքում արդեն ձեռք բերված շչակները տեղադրելու համար:

Հաշվի առնելով գործընթացի կարևորությունը ***մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից առաջարկվեց*** Թալին, Ապարան, Մեծաձոր, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներին համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության հետ հնարավորինս սեղմ ժամկետում աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

5. Հանքերի նպատակային նշանակության փոփոխության մասին /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ստեփանյանը ներկայացրեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գրանցված են 53 ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպություններ, որոնցից 2-ը ժամանակավորապես գործունեությունը դադարեցրել են, իսկ մնացած 51-ը իրականացնում են հողատարածքների նպատակային նշանակության փոփոխություն: Տեղեկացվեց, որ մարզի տարածքում գրանցված 34 հանքեր ունեն շուրջ 13 մլն ՀՀ դրամի ստանձնած պարտավորություններ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում իրականացնելու համար:

Մարզպետի կողմից կարևորվեց, որ օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվեն ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան: Մեկ անգամ ևս առաջարկեց համայնքների ղեկավարներին հետևողական լինել հողերի ոչ նպատակային օգտագործման դեպքերի կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Նշեց, որ հանքերի ապօրինի շահագործման դեպքերը, ըստ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, ունենալու են իրավական հետևանքներ ինչպես հողօգտագործողների, այնպես էլ նման իրավախախտումը կանխարգելելու և կասեցնելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձանց համար: Պետք է վերանայվի և օրինական դաշտ բերվի բոլոր փաստաթղթերը, պայմանագրերը:

6. ***Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ*** /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ստեփանյանը նշեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացվել են համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ դեռևս 2021թ.-ից

սկսված /Կարբի բնակավայրում իրականացվող Կարբի համայնքի հասարակական նշանակության տարածքների բարեկարգում ծրագիրը/:

2022 թվականին հաստատվել են Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրեր /ճանապարհաշինական, լուսավորության ցանցի կառուցում, հասարակական շենք-շինությունների վերանորոգում, խմելու ջրագծերի արդիականացում, գազաֆիկացում, ոռոգման համակարգերի արդիականացում /: 2022 թվականի 19 սուբվենցիոն ծրագրերից ավարտվել են 14-ը, 5-ը ընթացքի մեջ են:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել թվով 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել թվով 21 ծրագիր:

Տեղեկացվեց, որ 2024 թվականի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն հայտերը միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն անհրաժեշտ է ներկայացնել մինչև նոյեմբերի 25-ը:

Քննարկվեց նաև սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվող ՀՀ Արագածոտնի մարզի մանկապարտեզներին անհրաժեշտ գույքով ապահովելու հարցը: Նշվեց, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններին անհրաժեշտ գույքով ապահովելու խնդիրը կլուծվի մինչև տարեվերջ: **Մարզպետ Ս. Մովսիսյանի** կողմից անդրադարձ եղավ նաև «Արագածոտն-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի ընթացքի մասին և Ապարան քաղաքի Գարեգին Նժդեհի N 36 հասցեում պետական միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքի բնակարանների բաշխման խնդրին:

7. Մարզի բնակավայրերի մուտքի և ելքի ցուցանակների վերաբերյալ /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/ :

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող բնակավայրերի ցուցանակների պատշաճ տեսքն ապահովելու նպատակով կապալառու ընկերությունների կողմից իրականացվել են 18 բնակավայրերի ցուցանակների փոխարինում նոր ցուցանակներով, իսկ 30 ցուցանակներ թարմացվել են և բերվել պատշաճ տեսքի:

Ներհամայնքային ճանապարհների վրա գտնվող ցուցանակների մասով համայնքներին առաջարկվել է, որպեսզի ապահովեն ցուցանակների առկայությունը և պատշաճ տեսքը: Համայնքներում ցուցանակները գույքագրվել են և նշված ցանկը կտրամադրվի համայնքին փոխարինելու համար, իսկ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրայի ցուցանակները տեղադրվում են նախարարության կողմից:

Մարզպետի կողմից այս խնդիրը ևս կարևորվեց, եղան մի շարք դիտարկումներ որոշ մայրուղիներում եղած թերությունների, գծանշումների, ճանապարհային նշանների բացակայության և դրանց արագ շտկման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին:

Մարզպետի առաջարկությամբ մարզպետի տեղակալ Միլադա Հովաննիսյանը ներկայացրեց Արագածոտնի մարզում միասնական երթուղային ցանցի ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին տեղեկատվություն: Նշեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակում նախատեսում է հայտարարել Արագածոտնի մարզի միջմարզային և ներմարզային միասնական երթուղային ցանցը սպասարկող կազմակերպության ընտրության մրցույթը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվել է խոշորացված համայնքների ղեկավարներին քննարկել իրենց համայնքների ներհամայնքային տրանսպորտային սպասարկման խնդիրները և ներհամայնքային երթուղիների սպասարկման կազմակերպումը նպատակահարմար համարելու դեպքում համայնքների ղեկավարների համապատասխան դիմումները և ներհամայնքային երթուղիների հաստատված չվացուցակները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

8. ***Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին*** /զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :

/Զեկույցը կցվում է/:

Ա. Գրիգորյանը ներկայացրեց Արագածոտնի մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Նշեց, որ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցման ծրագրում ներառված են Արագածոտնի մարզի 23 ուսումնական հաստատություններ: 23 դպրոցներից 18-ը նախագծանախահաշվարկային աշխատանքների փուլում են, և շինարարական աշխատանքների ավարտն ու դպրոցների նոր գույքով կահավորումը նախատեսվում է 2026 թվականին: 23 դպրոցների շարքում Արագածոտնի 7 գյուղական բնակավայրերում կկառուցվի նաև 7 կրթահամալիր:

Կառավարության կողմից մարզում իրականացվող անհետաձգելի համարվող կապիտալ բնույթի ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարությունը կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմին է հատկացրել 230 մլն դրամ: Այդ միջոցներից ՀՀ Արագածոտնի մարզի 15 դպրոցներում իրականացվել են շենքային պայմանների բարելավման շինարարական 17 ծրագիր,որից 14-ն ավարտված են, 3-ն ավարտական փուլում են: Նշվեց նաև, որ 8 ուսումնական հաստատություններում հիմնվել են 8 նախակրթարան: Դրանցից 7-ը հանձնվել են շահագործման, որտեղ հաճախում է 132 երեխա, իսկ 1 նախակրթարանում շինաշխատանքներն ավարտական փուլում են:

2023 թվականին մարզպետի որոշմամբ մարզի դպրոցների խնայված միջոցների հաշվին նախատեսվել է լուծել հրատապ խնդիրները: Իրականացվող աշխատանքների համար հատկացվել է 173 մլն դրամ, որի արդյունքում 6 դպրոցներում իրականացվում են մարզադահլիճի և հանդիսությունների սրահի հիմնանորոգման աշխատանքներ, 3-ում այժմ իրականացվում են ջեռուցման համակարգի արդիականացման աշխատանքներ,6

դպրոցներում էլ կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ:Նշված բոլոր ծրագրերը կավարտվեն մինչև տարեվերջ:

9. Օրակարգային զեկույցների ավարտից հետո մարզպետ **Ս. Մովսիսյանի առաջարկությամբ այլ հարցերի** շարքում մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյանի և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Կ. Թաթուլյանի կողմից ներկայացվեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների խնդիրների և դրանց լուծմանն ուղղված աշխատանքների մասին տեղեկատվություն: Ներկայացվեց, որ մարզում բռնի տեղահանված մեր հայրենակիցների թիվը 4357 է: Նրանք բոլորը տեղավորված են, ոչ ոք առանց կացարանի չի մնացել: Համատեղ ջանքերով լուծվել են նրանց առաջնային կարիքները, ընթացքի մեջ են ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության էլեկտրոնային համակարգում նրանց հաշվառման գործընթացը, սկսվել են ՀՀ կառավարության կողմից տրամադրված գումարների փոխանցումները:Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ. Թադևոսյանը ներկայացրեց, որ մարզի դպրոցներում տեղավորվել են 564 արցախցի աշակերտ, լուծվում են նրանց գրենական պիտույքներով ապահովելու հարցերը: Աշխատանքներ են իրականացվում նաև բռնի տեղահանված մեր հայրենակիցների զբաղվածության ապահովման, նրանց մարզի բժշկական հաստատություններում կցագրելու ուղղությամբ:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ խնդրելով և հորդորելով շարունակել համատեղ արդյունավետ աշխատանքները, որպեսզի կարճ ժամանակահատվածում կարգավորվեն և թեթևանան մեր հայրենակիցների խնդիրները:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան